# 170

1. Որքան որ կուզես լարված ուժերով
Աշխատել չարին հաղթել բարիով
Կամ ամուր կամքով ու համառորեն
Ջանալ նվաճել «եսդ» անօրեն:

Բայց եթե կուզես դառնալ միշտ արի,
Սուրբ ու հաղթական զինվոր դու բարի,
Հերոսի նման նահատակ պայքարի՝
Դու մեռի՛ր, Հիսուս թող մեջդ ապրի:

2. Ու եթե կուզես օրը յոթ անգամ
Աղոթքի կանգնել դու հոժարակամ,
Կամ թաց աչքերով անձդ չարչարել՝
Ճգնելով ինքդ քեզ մաքուր պահել:

3. Կամքիդ հետ նաև ուժերդ բոլոր
Զենքեր են պատիր, փուչ ու մարմնավոր,
Եվ դու ինքնախաբ գերի ես անզոր,
Եվ դու ինքնախաբ գերի ես անզոր:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025